Արձանագրություն 6

ՀՀՄՆՀԲՄԱՇՁԲ-19/62 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27.12.2019թ.
ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Ստեփան Ղազարյան /գնահատող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Բացակայում էր՝ Խորեն Մնացականյան

1. Պայմանագրի կնքման գործընթացի մասին
(Կարեն Սիմոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

1.1.1 Գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին 12.12.2019թ. էլեկտրոնային ձևով՝ ARMEPS համակարգով, ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

1.1.2 12.12.2019թ պատասխանատու ստորաբաժանումը տեղեկացվել է, որ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը առկա օրերը ավելի քիչ են, քան շնորհվելիք պայմանագրի նախագծով աշխատանքների համար նախատեսված օրերի քանակը (պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը), որի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից մինչ օրս որևէ առաջարկություն չի ստացվել:

1.1.3 Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը պատվիրատուին է ներկայացվել ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում՝ 24.12.2019թ.:

2. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին
(Կարեն Սիմոնյան)

2.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1.3 կետը և ՀՀ կառավարության 15.06.2018թ. N 706-Ն որոշմամբ հաստատված «Բյուջեների կատարման» կարգի 84-րդ կետով սահմանված սահմանափակումները, ըստ որի տվյալ տարվա դեկտեմբերի 20-ից հետո չի թույլատրվում գործարքներով ստանձնել ֆինանսական նոր պարտավորություններ, իսկ գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը գանձապետարանն ընդունում է մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ՝ գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կարող կնքվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ

կետով, ՀՀՄՆՀԲՄԱՇՁԲ-19/62 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կ. Սիմոնյան /նախագահ/

---------- Հ. Հովսեփյան

---------- Ս. Ղազարյան

---------- Ա. Ստեփանյան

---------- Ա. Սողոմոնյան /քարտուղար/